## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<07>> օգոստոսի 2026թ.  N ՄՊ/504-Ա

ք. Արմավիր

**«ԱՐՏԱՄԵՏԻ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԵԼՔՈՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մելքոն Ղազարյանի 2026 թվականի օգոստոսի 3-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ   ե մ՝**

1. «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մելքոն Ղազարյանին տրամադրել 2026-2027 թվականների ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը 2026 թվականի օգոստոսի 10-ից 21-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մելքոն Ղազարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Մարինե Սարգսյանին:
3. «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Մարինե Սարգսյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի օգոստոսի 10-ից 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մելքոն Ղազարյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2502840179

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ